ՀԱՅՑԻՆՔ, և կամաց կամաց սկսեցինք ներիսման մէջ մտնել։ Մի ժամանակ ինձ թուումէր թէ ես քնել եմ, առ հասարակ ամենքը նուաղած և անըզգայացած էին, և ոչ ոք չէր կարողանում և ոչ մի բառ արտասանել։ Այս սարսափեցուցիչ լռութեան մէջ, իմ աչքերի առաջ ներկայանումէին վայրենի պատկերներ և երևակայութիւնս աղմկող երևոյթներ, և ահա յանկարծ լսվեցաւ մի զարհուրելի ձայն. «Ջուր, ջուր, նորից գալիս է։ Մի՞թէ չէք լսում», Ես շատ թոյլ էի լսում ձայնը և չէի կարողանում զանազանել, արդեօք ջրի ձայն էր այն թէ ոչ։ Նորից տիրեց լռութիւն։ Ես շոշափումէի շուրջս, բայց իմ զգայականութիւնս այն աստիճան բթացած էր, որ ես չկարողացայ համոզվել, ջուրը բարձրանումէր թէ ցածանում, և կայ արդեօք ջուր մտանում թէ չէ։ Նորից աղաղակ լսվեցաւ։ Այժմ ես աւելի պարզ լսեցի, և չէի կասկածում, որ մեզ օգնութեան են հասած։ Շուտով լսվեցաւ բահերի, թիակների զարկը, վերջապէս լսեցինք մարդիկների ձայներ ևս։ Օգնութիւնը մօտ էր։ Այսպիսի փրկութեան յոյսը զարհուրելի ժամերից յետոյ ամենքի կուրծքից դուրս հանեց վայրենի ուրախութեան ձայներ։

Քանի մի վայրկեանից յետոյ, արեգակի ճառագայթները մեր ապաստանարանի ներս թափանցեցին ճեղքված պատից։ Մեր դգացումը և նեգրերների ուրախութիւնը անկարող եմ նկարագրել։ Մենք փրկված էինք, բայց սանդուղի պակասութիւնը ուշացնումէր մեր գետնափոր ապաստարանից դուրս գալը։ Երիտասարդ նեգրուհու մանուկը, որի մասին նա ողբումէր, աւերակների տակ բոլորովին անվնաս գտնվեցաւ։ Մեզ ազատողները միստէր Գօրդօնի սեաւ մշակներն էին, որոնք փոթորկից առաջ դաշտում աշխատումէին, համարեա տնից միևկէս մղոն հեռաւորութեամբ։ Թէպէտ նոքա ևս ենթարկվել էին կատաղի փոթորկին, բարերաղդութեամբ ազատվել էին և շտապել էին օգնելու իւրեանց տիրոջը և դաստիարակին։ Աւերակների տեսարանը, որոնք մեր աչքի առաջ ներկայացան, երբ մենք մեր ապաստարանից դուրս եկանք, անկարելի է խօսքերով արտայայտել։ Դըրախտային գետինը, որը փոքր ինչ առաջ կանաչ էր, ծաղկած էր և զմայլեցուցիչ տեսարան էր, այժմ կարծես ահագին հրդեհով այրված լինէր։ Բոլոր շուրջը մերկ և սևացած էր։ Բուսականութիւնը, մարդկային բնակարանները, կենդանական կեանքը — բոլորը կամ ոչնչացած էր, կամ տների և ծառերի աւերակների տակ էր թաղված։

(Թարգմ.)

ՃԷՄ. Դ. ԳԱՌ. ԱՂ. Ց. Տ. Գ.

ԱՆԳԼԻԱՑԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ։

Անգլիական բոլոր թէ հարուստ և թէ աղքատ ուսումնարանները հիմնվեցան մասնաւոր անձների և ընկերութիւնների ձեռով, և այս պատճառով նոցա կեանքի և գործունէութեան մէջ կառավարութիւնը ամենևին

չէր խառնվում։ Բայց 1833 թ. երբ անգլիական ժողովրդի զարհուրելի տգիտութիւնը սկսեց սարսափ բերել անգլիացիների վերայ և երբ նոքա արդէն սկսեցին խոստովանել, թէ գործը բարւոքելու համար անհրաժեշտ է շուտով մի բան անել, պարլամենտի մէջ յաջողեցաւ ընդունել տալ առաջարկութիւնը, օրէնքի նախագիծը, որով կառավարութիւնը կարողացաւ մասնակցել դպրոցական գործերին, բայց այս մասնակցութիւնն ևս չափաւորված էր և ճշգիւ որոշված։ Կառավարութիւնը դպրոցների շինութեան համար 20,000 ֆունտ ստէրլինգ նշանակեց։ Այս ժամանակից սկսած կառավարութեան օգնութիւնը հետզհետէ մեծացաւ և այժմ տարեկան միլիոն բուսլուց աւելի է։

Բոլոր անգլիական դպրոցները կբաժանվին մասնաւոր և հասարակական դպրոցների։ Մասնաւոր դպրոցները շինված են մասնաւոր անձների փողով, և այս դպրոցների մեծ մասը մերժում կառավարութեան ամենայն միջամտութիւնը և հրաժարվում նորանից ընդունելու որևիցէ դրամական օգնութիւն։

Հոգևորականների ձեռով ևս շատ դպրոցներ են բացվում Անգլիայում։ Սորանից բացի ժողովրդի վերայ ազդելու ցանկութիւնից, անձնական շահերն ևս քաղում են։ Քահանան ամենից աւելի իւր վերայ է փորձում տգիտութեան հետևանքները. իւր և իւր ծխի լուսաւորված մարդիկների մէջ մի ահագին վիհ կայ, նոքա նորա մօտ չեն գնում ոչինչ բանի համար, և չեն ընդունում նորան, երբ նա գալիս է նոցա մօտ։ Ուստի քահանաները շրջում են դրացիների մօտ, դպրոցների համար փող են հաւաքում ցուցակով, և եթէ չէ բաւականանում, շատ անգամ իւրեանցից են դնում։

Միջնակարգ ուսումնարանների մէջ առաջին տեղն են բռնում քերականական կոչված դպրոցները, որոնք մի կերպով համապատասխան են մեր գիմնազիոններին։ Այս դպրոցներից շատերը շատ վաղուց են հիմնված. նոցանից ոմանք դեռ ևս ԺԴ դարից գոյութիւն ունին, բայց սոցանից հընագոյններն ևս կան, սակայն մեծ մասը հիմնված է ԺԶ և ԺԷ դարերում։ Սոցանից գլխաւորներն են. Իտոնեան, Ռոգբի, Հարրաուսեան, Ս. Պողոսի, Վէստմինստէրեան, Վինչէստէրեան և ուրիշ մի քանիսը։

Համարեա բոլոր քերականական դպրոցները շինված են մեծ քաղաքներից հեռու գիւղական տեղում, որը ունի գեղեցիկ դիրք, առատ ջրեր, շատ մարդագետիններ և լաւ պահպանված անտառներ։ Միայն երկու դպրոց կան, որոնք բացառութիւն են կազմում այս կանոնից և գտնվում են Լօնդօնում, Եւ սոցանից մին ևս անկման մէջ է, որի պատճառը դպրոցի քաղաքի մէջ գտնվելն են համարում, իսկ միւսն ևս վախենալով նոյն հետևանքներից պատրաստվում թողնել շուտով մայրաքաղաքը։

Անգլիացիները չեն կարող երևակայել, որ մանուկների կրթութիւնը տօթագին օդի և պինդ փակված չորս պատի մէջ յառաջ գնայ։ Անգլիական դպրոցները, ամենանշանաւորներն անգամ, չունին ահագին զբաղոցների կերպարանք, ինչպէս Եւրոպայի միւս երկիրների մէջ է,

այլ սովորաբար աւելի նման են մի ուրախ ագարակի, որի բազմաթիւ շինութիւնները ձգված են այս այն կողմ և ամփոփվումեն կենդանագրական անկարգութեամբ գլխաւոր շինութեան շուրջ, որտեղ գրտնվումեն դասարաններ։ Ահա մատուռն, նոյն կարգին և մատենադարանը, որը ամբողջ օրը բաց է աշակերտների համար. փոքր ինչ հեռու գտնվումեն գնդակախաղի և ուրիշ խաղերի տեղերը։ Այստեղ է աւագ ուսուցչի տունը, նոյնտեղ է գիշերօթիկ որդեգիրների բնակարանը, նոյնպէս և թոշակաւոր աշակերտների բնակարանները, այլև աղիւսից շինված սիրուն գիւղական յարմարաւոր ամարանոցներ։ Ամեն բան գերօրինակ մաքուր և ուրախ տեսք ունի, ոչինչ հարկադրական և զօրանոցական բան չկայ։ Չկան այստեղ ոչ կարմիր շոր հագած դռնապաններ, ոչ տնապահներ, և առանց ամենայն դժուարութեան կարող էք մտնել դասարանները, միայն թէ դասատուութեան միջոցին չէ, երբ այցելուների մուտքը խստիւ արգելված է և գուցէ թոյլատրվումէ միայն այն ժամանակ, երբ այցելուն անձամբ ծանօթ է ուսուցիչներին կամ յանձնարարական նամակներ ունի։

Դասերի վերջանալուն պէս, իւրաքանչիւր աշակերտ բոլորովին ազատ է և լիովին տէր է իւր ժամանակին, որ և տնօրինումէ նա իւր նկատողութեան համեմատ։ Բոլոր շրջակայ դաշտերն բաց են նորա համար. բոլոր խաղերը իւր տնօրէնութեան տակ են։ Նա կարող է տնից դուրս գնալ և երթալ ուր որ իւրեան հաճոյ է և վերադառնումէ տուն երբ իւր կամքն է։ Միայն նա պարտական է գալ դասի և ճաշի սկզբին և այն ժամին, երբ արդէն դռները փակվումեն։ Բայց որքան որ աշակերտը այստեղ անսահման ազատութիւն է վայելում, այնքան ևս խիստ պահանջումեն նորանից սահմանված պարտաւորութիւնների կատարումն։ Նա պարտաւոր է իւր ժամանակին ներկայ գտնվել, ուր և երբ հրամայված է, շատ լաւ սովորել աւանդված դասերը. իւրաքանչիւր յափշտակումն, մի փոքրիկ անճշդութիւն, մոռացկոտութիւն սարսափելի խիստ պատժին են ենթարկում։ Այս կերպով, ասումեն անգլիացիներ, մարդս վաղ կիմանայ, որ նորա կոչումն երկրիս վերայ ազատ լինել է, բայց և պատասխանատու իւր յանցանքների համար։

Իւրաքանչիւր դպրոցի շուրջ գտնվումեն քանի մի օթևաններ, ուր բնակումեն թոշակաւոր աշակերտները։ Այս օթևանները կառավարումեն դպրոցների ուսուցիչները։ Թոշակաւորները, մի որոշված վճար հատուցանելով, բնակումեն ուսուցիչների տանը, բոլորովին ընտանեկան կեանքի պայմաններով և իւրաքանչիւրն ունի իւր համար առանձին սենեակ։ Ճաշ, թէյ և ընթրիք ուտումեն աշակերտները ուսուցիչների ընտանիքի հետ և այս կերպով ուսումնարանում բոլորովին ընտանեկան կեանք են վարում։ Իրրև տանը։ Տան կամ պանսիօնի գլխաւորը սովորաբար ուսումնարանի ուսուցիչն է, բարձր համալսարանական կրթութիւն ստացած։ Այսպիսի ուսուցիչներ լինումեն միանգամայն և դաստիարակ և առաջնորդ իւրեանց մոտ բնակող մանուկների մտաւոր զարգացման։ Աւագ ուսուցիչները ա-

մեծանշանաւոր դեր են խաղում քերականական ուսումնարաններում և իւրեանց պարապմունքի բաղմութեան պատճառով չեն կարողանում շատ անգամ իւրեանք դաստիարակել իւրեանց աշակերտներին, ուստի նոքա վարձումեն մի ուրիշ դաստիարակ, որը գալիս է պանսիոն որոշված ժամերում կարդալու աշակերտների հետ նաղո�, ուղղելու դասերը, հարցնելու անգիր դասերը և առաջնորդելու այն անպարտադիր պարապմունքը, որոնք լրացնում են դասարանական ուսումը, (ընթերցանութիւն, և այլն)։ Դաստիարակները մեծ ազդեցութիւն ունին աշակերտների վերայ, որոնք յաճախ իւրեանց բոլոր դժուարութիւնները, նեղութիւնները և վիշտերը հաւատումեն նոցա։

Անգլիական երիտասարդների կրթութեան մէջ մեծ նշանակութիւն ունին հսկայական խաղերը, ոչ միայն աշակերտների աչքին, այլև ուսուցիչների։ Սենեակի զուարճութիւնները, օրինակ թուղթ խաղալը, ծխելը, արբեցութիւնը խստիւ արգելված են և այս յանցանքների մէջ նկատված աշակերտը նոյն իսկ առաջին անգամին, պիտի խստաւ արտաքսվի ուսումնարանից։ Այստեղի երիտասարդների խաղերը, որոնք խրախուսումեն ոչ միայն դպրոցի կառավարութիւնը, հապա նաև բոլոր հասարակութիւնը, սոքա են. գնդակախաղ, ղեկավարումն, զուղընթաց վազվզումն, կրիկէտ։ Այս վարժութիւնների մէջ գերազանցողներին այնպիսի պատուով և ոգևորութեամբ են ընդունում, ինչպէս որ հին ժամանակները Ոլիմպիական խաղերի մէջ քաջ հանդիսացողներին էին անում։ Մի քանի ուսումնարաններում շաբաթը երկու անգամ, միւսներում երեք անգամ դասերը կէսօրին են վերջանում։ Եւ ոչ միայն այն օրերում, երբ դասերը աւելի վաղ են վերջանում, հապա և բոլոր մնացած ժամանակները աշակերտները քանի մի ժամ խաղերով են զբաղում. խաղերը այստեղ ոչ միայն զուարճութիւն են, հապա առանձին աշխատութիւն են, շատ անգամ իբրև պարտադիր պարապմունք, որը տնօրինած է սովորութիւնը և պահանջումէ դպրոցական վարչութիւնը։ Ոչ միայն աշակերտները, հապա և դպրոցի վարչութիւնը մեծ յարգանքով են նայում խաղերի մէջ գերազանց գտնվող աշակերտներին։ Շատ դպրոցներում վարչութիւնը խաղերը աւելի է խրախուսում քան թէ գիտութիւնների պարապմունքը, իսկ ամեն տեղ ընդհանրապէս խաղերը աւելի են խրախուսում քան թէ ընթերցասիրութիւնը։ Կրիկէտում կամ ղեկավարութեան մէջ Տէմզայի վերայ գերազանց հանդիսացողները շատ դպրոցներում աւելի մեծ յարգանք են վայելում, քան թէ մատենագրական և մաթեմատիքական գիտութիւնների գլխաւոր մրցման մէջ գերազանցող աշակերտները։ Եւ ինչ կենդանութիւն է լինում մարմնամարզական մրցմունքի օրերում, ինչ մրցումն է լինում միևնոյն ուսումնարանի աշակերտների մէջ, բայց առաւելապէս երկու դպրոցների մէջ։ Ոօքբիի աշակերտները հրաւէր են ուղարկում Իտոնին, Հարաուսեան պատանիները կամենումեն ոյժեր փորձել Իտոնեանների հետ։ Հարրոուի մատենագարանում Լորդ Բայրոնի, Պալմերստոնի և ուրիշ երևելի մարդիկ-

ների պատկերների կարգում, որոնք երբեմն աշակերտ էին այս ուսումնարանին, պարծենալով ցուցանումն ձեզ պատուաւոր վահանը, որը երեք անգամ տարած են Հարրոուի դպրոցի աշակերտները հրացանաձգութեան մրցման մէջ։ Բայց թէ ինչպիսի կրքոտ մրցումն է լինում նաւակների մրցման օրերում։ Արդէն առաջուց քանի մի ամսի ընթացքում պատրաստվումեն այդ մրցման համար։ Սա ուսումնասիրութեան առանձին առարկայ է, առանձին մարզումն է։ Հսկայական խաղերի այս հակումն շարունակվումէ մանկական տարիներից յետոյ ևս։ Նոյն եռանդը, նոյն մրցումն Օկսֆորդի և Կէմբրիջի համալսարանների ուսանողների մէջ կայ։ Ամեն տարի մարտ ամսում երկու մեծ համալսարանները հաւաքվումեն Լօնդօնում նաւակների վճռօղական մրցման համար Տէմզայի վերայ։ Բոլոր մայրաքաղաքը կենդանի կերպով մասնակցումէ այս հանդէսին։ Տիկիններ և օրիորդներ զարդարվումեն համալսարանական գոյներով։

Հսկայական խաղերի կիրքը իւր լաւ և վատ կողմեր ունի։ Ձնայելով մշտական մառախլոտ և խոնաւ երկնքին, անգլիական երիտասարդները գերազանց առողջութիւն, գերօրինակ ոյժ և եռանդ ունին։ Բայց միևնոյն ժամանակ մտաւորական պարապմունքը երբեմն բաւական վնասվումէ, որովհետև մարմնական կրթութիւնների համար գործ են դնում շափազանց շատ ժամանակ։ Այս խաղերը և մրցմունքը այն աստիճանին գրաւումեն շատ երիտասարդներին, որ նոքա միայն նոցա վերայ են մտածում, և եթէ դասերը բոլորովին երեսից չեն ձգում, որովհետև վարչութիւնը խստիւ հրամայումէ սորա մասին, բայց և այնպէս ամենևին չեն զարգանում մտաւորապէս։ Ուսումնարանների մէջ շափազանց յարգանքը դէպի ֆիզիքական զարգացումն պատճառ է լինում անգլիացիների գրեթէ հիւանդութիւն դարձած ձգտմանը դէպի մենամարտութիւն, աքաղաղների կռիւ և մարմնակրթութեան ուրիշ տեսակներ։

Ուսումնարանի բոլոր աշակերտները չեն բնակում մեր նկարագրած պանսիօնների մէջ։ Որդեգիր աշակերտները զանազանվումեն միւսներից իւրեանց դրութեամբ, կանոնով, կենցաղավարութեամբ, շատ անգամ և զգեստով։ Հիմնելով դպրոցը, հիմնադիրները միշտ աչքի առաջ ունեցած են ուսում տալ գոնէ քանի մի աղքատ մանուկներին։ Սակայն հարկաւոր չէ կարծել, թէ որդեգիր աշակերտները բոլորովին ազատ են վարձ վճարելուց։ Սովորաբար նոցա կրթութիւնը երկու, երեք անգամ աւելի արժան է նստում, քան թէ թոշակաւորներին, որոնք մեծ գումարներ են վճարում։ Բայց Կարտէզեան դպրոցում և Վինչէստէրում որդեգիրների ուսումը բոլորովին անվարձ է։ Փոքր և աղքատ դպրանոցներում բոլոր որդեգիրները բընակումեն մի առանձին շինութեան մէջ, բռնած ունին քանի մի ննջարաններ։ Բայց մեծ մասամբ դպրոցների մէջ բարձր դասարանի որդեգիր աշակերտներին տալիս են բոլորովին առանձին սենեակ։ իսկ փոքրները բընումեն մի ննջարանի մէջ, որը բաժանված է առանձին փոքրիկ խցիկների։ Որդեգիրներն ամեն բանով զանազանվումեն իւրեանց թոշակաւոր ընկեր-

ներից։ Նոքա ոչ միայն հագնումն սովորաբար ուրիշ զգեստ, այլ նոցա համար մինչև անգամ առանձին տեղ կայ եկեղեցում։ Նոքա շատ քիչ են բարեկամանում և ժողովվում թոշակաւորների հետ։ խաղումն միայն միմեանց հետ և անհամեմատ պակաս են զբաղում հսկայական խաղերի զուարճութիւններին։ Անհամեմատ աւելի աղքատ և աննշան լինելով քան թէ իւրեանց ընկերները, որդեգիրները նոյնպէս անհամեմատ աւելի լաւ են պարապում գիտութիւններով։

Որդեգիր աշակերտները իւրեանց մտաւոր զարգացման նկատմամբ առհասարակ քերականական դպրոցների ընտրեալ մաս և ծաղիկ են համարվում։ Նոքա մտնում են համալսարան շատ աւելի լաւ պատրաստված, և գրեթէ բոլոր արտօնութիւններ նոքա են ստանում, գիտութիւնների մէջ ցոյց տուած յառաջադիմութեան համար։

Անգլիական բոլոր ուսումնարանների մէջ պահպանվում է գերօրինակ կարգապահութիւն։ Օրէնքին, մի անգամ սահմանված կարգին, սովորութեան, ամենատեսակ տնօրէնութիւններին և հասարակական պահանջներին հնազանդութիւնը անգլիացիները ծծում են դեռ ևս իւրեանց մայրական կաթի հետ։ Նորա քոյրերը և եղբայրները հնազանդում են ծնողների սահմանած կարգապրութեան։ Նորա ծնողները, շնայելով քանի մի սովորութիւնների ծանրութեան և ակներև անտեղութեան, քաջութեամբ և անտրտունջ կատարում են այն ամենը, ինչ որ տնօրինած է հասարակութիւնը։ Մանուկն իւր երևակայութենից տեսնում է, որ նորա հայրը խոնարհում ամենայն օրէնքի առաջ, որքան ծնչող, խիստ և մինչև անգամ անտեղի ևս լինի։ «Անգլիացին, ասում մի նշանաւոր հեղինակ, քննում միայն օրէնքի ն-ի-ր-ի-ն բայց օրէնքը ընդունվելու րոպէից նա կուրօրէն հնազանդում նորան»։ Սորա հետևանքն է որ անգլիական մանուկները դպրոցներում շուտով են հնազանդում սահմանված կարգին։ Իւր դպրոցի կանոնադրութեան մէջ նա տեսնում է իւր փոքրիկ հայրենիքի տեղական օրէնքը։ Նոքա համակրում են կանոնադրութեան մինչև անգամ օտարոտի յօդուածներին, եթէ պատահում են և յարգում նոցա նոյնպէս, ինչպէս լրջմիտ պատուէրներ։ Կանոնադրութեան մէջ մի որևիցէ փոփոխութիւն և բարեւոքում անելը դժուար գործ է նոյն ինքն իշխանութեան համար։ այն ատիճանին նշանակված կարգերը աշակերտների սովորութիւն են դառնում։ Այս ընտելացած, սովորած լինելովն, մասամբ ևս միանգամ սահմանված օրէնքին, միանգամ հրատարակված կանոնին համակրելովն կարելի է մասամբ մեկնել շատ հնոտի հաստատութիւնների պահպանութիւն, անշարժութիւն և հնացած սովորութիւններ, որոնք ժամանակիս ոգուն անհամապատասխան են և տիրապետում մինչև այժմ քերականական դպրոցներում։ Դպրոցների կառավարիչ աշխատում են նշանակել այնպիսի անձներ, որոնք կարողանային ձեռք բերել երիտասարդների հաւատարմութիւն և աշակերտների սրտեր գրաւել։ Ուսուցիչները մեծ մասամբ պատկանում են հոգևորական դասին և ոչ միայն դասախօսում դպրոցում, այլև վարում եկեղեցական պաշ-

տան և քարոզումն եկեղեցում։ Այսպէսով նոքա կարողանումն բոլորովին տիրել իւրեանց աշակերտների հոգուն։ Ուսումնարան մտնող մանուկներն արդէն իւրեանց տանը սովորած են խորին յարգանքով և խոնարհութեամբ նայել ամեն կրօնական բաներին։ Վաղ իւրեանց մանուկ հասակից նոցա սովորութիւն է դարձել աղօթել. դեռ ևս իւրեանց մօր ծնկների վերայ նստած նոքա սովորած են փառաբանութեամբ լսել Աստուածաշնչի ընթերցանութիւնը։ երբէք չեն լսած ամենափոքր կասկած կրօնի մասին։ Անհաւատ անգլիացին երբէք իւր կասկածները կրօնի վերայ չի ասի իւր ընտանիքի մէջ և իբրև խորին հաւատացող նա կատարեալ յարգանք է մատուցանում ամեն ծէսերին և կրօնական սովորոյթներին։ Նոյն յարաբերութիւնը կայ առ կրօնը դպրոցում ևս։ Պիւրակէ և երկուշաբաթի առաւօտը նուիրված են կրօնի դասերին։ Իւրաքանչիւր օր առաւօտ և երեկոյ լինում ընդհանուր աղօթք և Աստուածաշնչի ընթերցանութիւն։

Պարտաւորութիւններ չկատարելու համար պատժումն և շատ անգամ շատ խիստ։ այսինքն արձակուրդից են զրկում։ տալիս են աւելորդ դաս սովորելու։ բանտի մէջ են փակում։ գործ են դնում և զանազան մարմնական պատիժներ։ որոնց մէջ մինչև այժմ գլխաւոր դերը խաղում ձաղկածեծը կամ բրածեծը (pozra) և վերջապէս արտաքսումն վարժարանից։ Աշակերտների լիակատար ազատութիւնը և ինքնակայութիւնը։ լաւ յարաբերութիւններն առ ուսուցիչները և նոր ժամանակների ուրիշ կարգերը այստեղ։ ինչպէս անգլիական կեանքի բոլոր երևոյթների մէջ։ յառաջ են գնում միջնադարեան սովորոյթների հետ միասին։ Ինչպէս դպրոցական բոլոր կազմակերպութեան մէջ իւրաքանչիւրը իւր տեղը գիտէ։ իւրաքանչիւրին յայտնի է իւր պարտաւորութիւնը։ նոյնպէս և ծեծելու պարտաւորութիւնը վաղուց յանձված է աւագ ուսուցչին։ Միայն աւագ ուսուցիչն ևեթ իրաւունք ունի իւր ձեռով այս դատավճիռը կատարելու։ Դատավճռի համար նշանակված ժամին նա ծեծում այն ամեն մանուկներին։ որոնց միւս ուսուցիչները ուղարկումն նորա մօտ։ Քանի մի դպրոցներում կայ տուգանքի մատեան. եթէ մի մանուկ երեք անգամ նշանակվեցաւ մատեանում մի որևիցէ բանի համար։ օրինակ 10 բոպէ դասարան ուշ մտնելու համար։ նշանակված ժամին աղօթքին ներկայ չգտնվելու համար։ և այլն։ չորրորդ անգամին նորան արդէն պատժումն ձաղկով։ Դպրոցի կանոններով այս պատժին ենթակայ է ամեն աշակերտ։ ինչ հասակի որ լինի։ բայց իրօք ծեծումն միայն փոքր աշակերտներին։ Ամեն կանոններին և օրէնքներին հնազանդելու սովորած լինելով։ աշակերտներն իւրեանք են պաշտպանում ձաղկածեծը և չեն կամենում նորան փոխարինել մի ուրիշ պատժով։ Մի անգամ մի դպրոցի աւագ ուսուցիչը կամեցաւ ձաղկածեծի տեղ զրամական տուգանք նշանակել։ «Մենք սաստիկ ընդդիմացանք այս նորամուտ գործին»։ պատմում մի անգլիացին իւր դպրոցական կեանքի մասին գրած յիշատակարանների մէջ։ «մենք չէինք կամենում որ մեզանից առնեն մեր սեփական կօպէկները։ Սեղ թուում եթէ ձաղկածեծը շատ յարմար է ջէնտըլմէնի

(ազնուական) կոչմանը, իսկ տուգանքը ոչ երբէք։ Դպրոցը ընդդիմացաւ աղաղակելով. «ի բաց տուգանքը, կեցցէ ձաղկածեծը»։ Սա մի նշանաւոր ապստամբութիւն էր, և մենք, հին կարտէզեաններս (լուսակաց միայնակեացներս) մինչև այժմ դեռ յիշումենք այն խռովութիւնը։ Ձաղկածեծը հանդիսաւոր վերականգնեցաւ։ Միւս օր առաւօտը, դրամական տուգանքը վերցնելուց յետոյ, դասարան մտնելիս տեսանք ձաղկերի հոչակաւոր անտառը և երկու ժամ գործածվեցաւ նոցա ի գործ դնելու համար»։

Շատ դպրոցներում շատ անգամ տալիս են ապտակներ, բայց աւելի յաճախ հարուածներ են տալիս ձեռին։ Ուսուցիչը բարակ քանոնը ձեռին պատուիրում աշակերտին մեկնել ձեռը։ Մանուկը ստանում հարուած և իսկոյն մեկնում միւս ձեռը։ Ձափաղանց յաջողակ մեկնում նա հարուածների համար նախ մին, և յետոյ միւս ձեռը, առանց նշան անգամ ցոյց տալու թէ կամենում ձեռը յետ քաշել և գոնէ մի բոպէ ուշացնել պատիժը։ Երևում, որ աշակերտներն իւրեանց հպարտութիւն և պարծանք են համարում պատիժը կրել գործած յանցանքի համար առանց աղաղակելու կամ ձայն հանելու։ Թէպէտև նոցա աչքերը թրջվումեն և արտասուքները ցայտումեն նոցա կամքի հակառակ։

(Կշարունակվի) ՃԷՖ. Ե. ԴՈՍ. ՍՂ. Ա. Զ.

ՅՈՒՅԱԿ

ՄԴԷՆ ԵՒ ՅԱԽՈՍՈՑ ԱՐՔԷՈՆՑ ՄԱՐԴՈՒԷՐՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻ ՅԱՆՈՒՆ ԱՐԲՈՑ ԹՈՒՔՄԱՆԸՆՑ ՎԵՐԱԼ Է ԱՅՆ ՄԱՐԴԻ 1879 ՄԻ ՅԱՅ ՄԱՐԴԻ 1880 ՄԻ։

ՄՈՒՏՔ.	Ր.	Կ.	ԾԱԽՔ.	Ր.	Կ.
Ընկերութեան դրամագլուխ տոկոսաբեր . . .	3300		Երից ուսուցչաց եւ մի վարժուհոյ վարձն . . .	952	83
Ապառիկ ընկերութեան .	328		Վաւելեաց, ի պէտս դպրոցի ձեռագործութեան, դրեանց չը-քաւոր երեխայից, Մշակ եւ Մերոյ լրագրաց, եւ այլ մանր մասնաբար պիտոյից . . .	130	30
Ապառիկ ի կալուածոց ուսումնարանական կրպակացն .	48		Վարձք ծառայից . .	96	36
Ի նախկին հոդաբարձուէ .	362	22	Նորոգ նստարանաց եւ գրասեղանաց շինութեան . .	42	15
Յարդեանց մասանց տան ս. Աստուածածին եկեղեցւոյն .	199	18	Շինութիւն օրիորդաց դպրոցի եւ երից նորոգ կրպակաց, եւ նորոգութիւն միւսոց . .	995	92
Ի թոշակագրամոց .	228	75	Վարձ բնակութեան նորաւարժ երեխայից . . .	10	
Ի կալուածոց եկամուտք .	336	30		2227	56
Ի կապալառուէ մամավաճառութեան . . .	300		Մնայ առ մին մարտի 1880 ամի տոկոսաբեր դրամագլուխ .	3863	29
Ի դրամագլխոց տոկոսիք .	485				
Յեկեղեցական գումարաց սրբոյն Աստուածածնի յօգնութիւն շինութեան օրիորդաց դպրոցին	200				
Ի պատկատեարց նուէրք .	303	40			
	6090	85			